ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱՅԳԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Ս. Շահվերդյան
Հաստատվել է համայնքի ավագանու նիստում

2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված – 1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի պայմանների, սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

1. Համայնքի իրավիճակի գնահատում

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Լոռու մարզի Այգեհատ համայնքը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում: Մարզկենտրոնից գտնվում է 55 կմ հեռավորության վրա, Ալավերդի – Ստեփանավան ճանապարհի 14-րդ կմ-ում: Ծովի մակերևույթից բարձր է 1165 մ-ով: Գյուղը հիմնադրվել է 1700-ական թվականների սկզբին՝ Ղարաբաղի Շող գյուղից եկած Շահվերդյան եղբայրների կողմից: Գյուղի տարածքում կա մատուռ, որը կառուցվել է 13-րդ դարում, ինչպես նաև Քոբայրի ամբողջ վանական համալիրը (վարչական տարածք):

Գյուղի կլիման բարեխառն է, ձմեռը՝ մեղմ, ամառը՝ զով:

Ժողովրդագրություն

Գյուղի բնակչությունը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ 276 մարդ է, որից տղամարդիկ՝ 113 մարդ, կանայք՝ 163:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է

1.	երեխաներ (0-6տ.)	11
2.	դպրոցական (7-17տ.)	24
3.	18-62 տարեկան	54
4.	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	2
5.	թոշակառուներ	55
6.	աշխատունակներ	46
7.	աշխատանք ունեցողներ	18
8.	գործազուրկներ	6

Գյուղն ունի 98 ծուխ, որոնցից 10–ը ընդգրկված են «Փարոս» համակարգում:

Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվելու է չորս տարին մեկ անգամ:

Գյուղապետը ստեղծել է իր աշխատակազմը՝ հետևյալ կառուցվածքով՝

1. աշխատակազմի քարտուղար	1 դրույք
2. հաշվապահ	1 դրույք
3. գանձապահ	1 դրույք
4. գույքահարկի և հողի հարկի կորդինատոր	1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

1. Մշակույթի տուն-գրադարան ------- չգործող
2. Մանկապարտեզ ------ չգործող

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ հետևյալ տեսքով՝

1. Գյուղապետարանի շենք
2. Մշակույթի տուն
3. Մանկապարտեզ
4. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
5. Խմելու ջրի ներհամայնքային ցանց
6. Ոռոգման ցանց
7. Աղբյուր
8. Հուշարձան
9. Գերեզմանատուն

Վերջին տարիների տնտեսական անկման պատճառով վատթարացել է գույքի ֆիզիկական վիճակը: Անձրևների և սելավների պատճառով անմխիթար վիճակում են ներհամայնքային փողոցները:

Շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքում աղբահանությունը կատարվում է համայնքի ֆինանսական միջոցներով, նաև բնակչության կողմից՝ շաբաթօրյակների միջոցով:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 98 տնտեսություն՝ 5643,4 քմ բնակելի տարածքով: Կա 2 վթարային առանձնատուն: Բնակարանով անապահով ընտանիքների թիվը կազմում է 15-20:

Հողատարածքների օգտագործում

Համայնքի վարչական տարածքը 1430.83 հա է, որից՝

1.	վարելահող	337 հա
2.	խոտհարք	25 հա
3.	արոտավայր	132 հա
4.	անօգտագործելի հողեր	35 հա
5.	դաշտային ճանապարհներ	2 հա
6.	գերեզմանոց	1 հա
7.	տնամերձ հողեր	33 հա
8.	դպրոց	1 հա
9.	հուշարձան	0,4 հա
10.	սեփականաշնորհված հողեր	282 հա
11.	մեկ հողաբաժնի չափը	1,82 հա

Հողի սեփականաշնորհումից օգտվել է 122 ընտանիք:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսական ճյուղերն են՝

1. Անասնապահություն
2. Հողագործություն

Գյուղատնտեսության բնագավառում բնակչության 80%-ը զբաղվում է անասնապահությամբ: Համայնքն ունի շուրջ 325 խոշոր, 32 մանր եղջերավոր և 122 գլուխ խոզ: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ է առաջանում: Խոտի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

Կրթություն

Գյուղն ունի մեկ հիմնական դպրոց, որը վերջին տարիներին վերանորոգվել է մասամբ: Դպրոցում սովորում են 17 աշակերտ: Դպրոցն ապահովված է ուսուցիչներով, որոնցից հիմնական մասը բարձրագույնավարտ են:

Համայնքն ունի մեկ մանկապարտեզ տիպային շենքով, չի գործում, ունի վերանորոգման կարիք:

Մշակույթ, սպորտ

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն-գրադարան, որն ունի 5284 գիրք՝ անմխիթար վիճակում:

Առողջապահություն

Գյուղում գործում է մեկ բուժկետ, բարվոք վիճակում: Կա համապատասխան գույք և սարքավորում: Բուժկետն ունի մեկ աշխատող:

Տնտեսություն

Համայնքում գործում է առևտրի 2 օբյեկտ՝ 1-ական աշխատողով: Ամառային առևտուրն իրականացվում է ներկրվող ավտոմեքենաներով՝ շրջիկ ձևով:

Համայնքի ուժեղ կողմերը

1. Գյուղն ունի նորմալ տրանսպորտային կապ մարզկենտրոնի և հարակից քաղաքների ու գյուղերի հետ:
2. Գյուղը գազաֆիկացված է:
3. Համայնքն ունի բավականաչափ վարելահող:
4. Համայնքի դպրոցն ապահովված է բարձրագույնավարտ մասնագետներով:
5. Գյուղում զարգանում է անասնապահությունը, որը հանդիսանում է բնակչության հիմնական ապրուստի միջոցը:

Համայնքի թույլ կողմերը

1. Համայնքի գյուղտեխնիկան գտնվում է մաշված վիճակում:
2. Վերանորոգման կարիք ունեն մշակույթի տան շենքը և գյուղամիջյան ճանապարհները:
3. Վերջին տարիներին նվազել է երեխաների թվաքանակը, որի հիմնական պատճառը բնակչության արտագաղթն է:

Համայնքին հիմնական վտանգ սպառնացող խնդիրները
1. Կարկտահարություն
2. Խմելու ջրի ներքին ցանցի անմխիթար վիճակը:

2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Ռազմավարություն
1. Կատարելով բարեփոխումներ՝ բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակույթային և հանգստի պայմանները:
2. Գյուղը դարձնել բարեկեցիկ և բարեկարգ բնակավայր:

Համայնքի հիմնական նպատակները՝
1. Էլ ավելի զարգացնել անասնապահությունը համայնքում:
2. Վերանորոգելով մշակույթի տունը՝ կազմակերպել բնակչության հանգիստը:
3. Խմելու ջրի ցանցի վերանորոգում:
4. Փողոցների վերանորոգում, ասֆալտապատում և լուսավորում:
5. Համայնքային կենտրոնի կառուցում:
6. Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում:

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1
Խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960-ական թթ.: Համակարգն այժմ գտնվում է անմխիթար վիճակում:

Վերջին տարիների ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել ջրամատակարարման համակարգի խողովակաշարերը: Հաշվի առնելով բնակիչների դիմումները և խնդրանքները, սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել համայնքի խմելու ջրի ջրամատակարարման ցանցը:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. Կտրուկ նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները:
2. Կանխել ջրամատակարարման համակարգ կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով ծրագիրը՝

1. Կնվազեն ջրի կորուստները
2. Կբարելավի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

Ծրագիր 2
Համայնքի ներքին փողոցների և ճանապարհների բարեկարգում և լուսավորում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի ներքին փողոցների և ճանապարհների երկարությունը մոտավորապես 4 կմ է, որից 1 կմ-ը նախկինում ասֆալտապատ է եղել և ունի խիստ վերանորոգման կարիք: Ընդառաջելով ազգաբնակչության դիմումներին, այս ծրագրով առաջարկվում է բարեկարգել և լուսավորել գյուղամիջյան ճանապարհներն ու փողոցները:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները

Ունենալ բարեկարգ ու լուսավոր փողոցներ, նպաստելով մարդկանց ապահովված տեղաշարժը:

Ծրագիր 3
Մշակույթի տան կապիտալ վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1950-ական թթ, կատարվել է մասնակի վերանորոգում, կարիք ունի կապիտալ վերանորոգման: Հաշվի առնելով, որ բնակչությունը աշխատանքից հետո չունի զբաղվելու և հանգստանալու վայր, համայնքը համարում է առաջնահերթ հիմնախնդիր մշակույթի տան վերանորոգումը:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները

1. Աշխուժացնել համայնքի մշակույթային կյանքը:
2. Համայնքում կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ և երեկույթներ:
3. Աշխատանքից ազատ ժամերին կազմակերպել բնակչության հանգիստը:

Ծրագրից սպասվող արդյունքները

1. Բնակչության ազատ ժամանակն անցկացնել հետաքրքիր և արդյունավետ:
2. Համայնքում ունենալ ժամանակակից մշակույթի տուն՝ միջոցառումներ և մրցախաղեր անցկացնելու համար:

Ծրագիր 4
Համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատում

Ծրագրի նպատակները

Նախատեսել Այգեհատ համայնքի սեյսմիկ ռիսկերի գնահատումը և քարտեզի կազմումը:

Ծրագրից սպասվող արդյունքները

Սեյսմիկ ռիսկերի նվազեցում:

Գյուղատնտեսական ցուցանիշներ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 82՝ այդ թվում
   ա) անհատական տնտեսություններ 81
   բ) կոլեկտիվ տնտեսություն -
   գ) պետական տնտեսություն -
   դ) օժանդակ տնտեսություն 1
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը
   ա) ցորեն 2000 ցենտներ
   բ) գարի 200
   գ) եգիպտացորեն 1200
   դ) կարտոֆիլ 700
   ե) կաղամբ 5
   զ) բանջարաբոստ. կուլտուրա 185
   է) տեխնիկական մշակաբույս 290
   ը) կաթ 275
   թ) միս 400
   ժ) բուրդ 0.2
   ի) ձու 2000
   լ) մեղր 60
3. Ցանքատարածությունները հա
   ա) հացահատիկ 80 հա
   բ) եգիպտացորեն 40 հա
   գ) կարտոֆիլ 7 հա
   դ) բանջարաբոստ. կուլտուրա 7.6 հա
   ե) տեխնիկական մշակաբույս 25 հա
   զ) կաղամբ 0.5 հա
   է) առվույտ 65.2 հա
   ը) կորնգան 6 հա
   թ) վարսակ 3 հա
3. Անասնագլխաքանակը
   ա) խոշոր եղջերավոր անասուն 250
   այդ թվում կովեր 99
   բ) մանր եղջեր. անասուններ 32
   այդ թվում մայրեր 22
   գ) խոզեր 108
   այդ թվում մայրեր 17
   դ) թռչուններ 563
   այդ թվում հավեր 502
   ե) մեղվաընտանիքներ 67

Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը (հատ)

թրթուրավոր տրակտոր- 6
անիվավոր տրակտոր- 6
հացահատիկային կոմբայն- 1
խոտհնձիչ կոմբայն- 1
բեռն. ավտո. տարբեր մակնիշի- 4
տրակտորային կցասայլեր- 6
գութաններ- 6
կուլտիվատորներ- 2
շարքացաններ- 2
խոտ հավաքող մեքեն.- 2
պարարտանյութ ցրիչ- 1
հացահատիկազտիչ մեքենա- 2
կերամանրիչ- 1

Հավելված 1

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը